

«Հ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/5

18 հունիսի 2013 թ.

Քննարկվեց «Քեթրին Գրուպ» ՍՊԸ 06.06.2013 թ-ի վարչական բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 08.05.2013 թ-ի թիվ 1422174 վարչական ակտի դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 08.05.2013 թ-ի թիվ 1422174 վարչական ակտով (այսուհետ նաև վարչական ակտ) մասնավորապես արձանագրվել է.

Ս.թ. ապրիլի 16-ին ժամը 16:00 սահմաններում կատարված օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում ք.Երևան, Խորենացի 35 հասցեում արձանագրվեց անփաստաթուղթ ապրանքի առաքում «Քեթրին Գրուպ» ՍՊԸ վարորդ Արմեն Մկրտչյանի կողմից: Առաքումը կատարվում էր «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի 15 SL 192 պետհամարանիշի ավտոմեքենայով, որում առկա ապրանքի /բանան, նարինջ/ ընդհանուր գումարը վաճառքի գնով կազմում էր 1.401.936 դրամ: Վաճառքի գինն ընդունվել է երկկողմանի հիմնավորված նույն ապրանքների հաշվարկային փաստաթղթերից:

Ելնելով վերոգրյալից «Քեթրին Գրուպ» ՍՊԸ-ին նշանակվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված տուգանքը (100% դրույքաչափով)՝ գումարով 1.401.936 դրամ:

«Քեթրին Գրուպ» ՍՊԸ բողոքում մասնավորապես նշված է.

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ կողմից 08.05.2013 թ-ին կայացվել է վարչական ակտ՝ որով որոշվել է «Քեթրին Գրուպ» ՍՊԸ-ին /այսուհետ Ընկերություն/ նշանակել տուգանք «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի խախտման հիմք հանդիսացող անփաստաթուղթ ապրանքների վաճառքի գներով արտահայտված ամբողջ գումարի 100 տոկոսի չափով: Վարչական ակտում տեղ գտած խախտման նկարագրության մեջ նշվում է, որ անփաստաթուղթ ապրանքի առաքումը կատարվում էր «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի 15 SL 192 պետհամարանիշի տրանսպորտային միջոցով և որում առկա ապրանքի /բանան, նարինջ/ ընդհանուր գումարը վաճառքի գնով կազմում էր 1.401.936 դրամ: Ընդ որում, վաճառքի գինն ընդունվել է երկկողմանի հիմնավորված նույն ապրանքների հաշվարկային փաստաթղթերից:

Գտնում ենք, որ վերը նշված վարչական ակտը ենթակա է անվավեր ճանաչման և վերացման հետևյալ պատճառաբանությամբ.

1. Առաջին հիմքով ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ-ն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի 13/04/2013 թ-ի թիվ 1422174 որոշման քաղվածքի համաձայն ուներ իրերի և փաստաթղթերի հետազոտման և արտաքին դիտման իրավունք, այլ ոչ թե տրանսպորտային միջոցի զննության իրավունք: Համաձայն «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 20-րդ հոդվածի՝ իրերի և փաստաթղթերի հետազոտումը դրանց զննումն է հատկանիշների և բովանդակության բացահայտումը՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց, ինչպես նաև հետազոտման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց: Հետազոտման ընթացքում դրանից հետո ապահովվում է օբյեկտների և դրանց վրա եղած հետքերի պահպանությունը: Իսկ նույն օրենքի 24-րդ հոդվածի համաձայն, շենքերի, շինությունների, կառույցների, տեղանքի և տրանսպորտային միջոցների հետազոտումը դրանց արտաքին զննումն է, հատկանիշների և այլ տեղեկությունների բացահայտումն է հատուկ և այլ տեխնիկական միջոցներով կամ առանց դրանց, ինչպես նաև հետազոտման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց: Այս հոդվածների ուսումնասիրությունից պարզ է դառնում հետևյալը, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ

ՕՀՎ-ն իրականացրել է ընդհանրապես այլ միջոցառում, քան նախատեսված էր վերը նշված քաղվածքում: Ինչ վերաբերում է արտաքին դիտմանը, ապա հարկ է նշել, որ Օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ Արտաքին դիտումը, առանց բնակարանի անձեռնմխելիության խախտման, անձանց հետևելը կամ առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքի վերահսկումն է բաց տարածությունում կամ հասարակական վայրերում՝ հատուկ և այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց, ինչպես նաև դիտման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց: Սակայն ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ-ն հաշվի չառնելով վերը թվարկված հոդվածների և քաղվածքում առկա պահանջները գործել է կամային սկզբունքով՝ խախտելով ՀՀ օրենսդրության պահանջները:

2. Երկրորդ հիմքով մինչև վարչական ակտը կայացնելու պահը եղել է վարչական վարույթ, որի մասին ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ-ն ծանուցում է ուղարկել Ընկերությանը 06.05.2013 թ-ին՝ նշում կատարելով վարչական վարույթի իրականացման տեղը, օրը և ժամը, այն էր, 08.05.2013 թ-ին ժամը 10-00-ին: ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ-ն ծանուցումը մուտք է արել Հայ Փոստ ծառայություն 06.05.2013 թ-ին, իմանալով, որ Հայ Փոստը ծանուցումը չի կարող երկու օրից շուտ ժամկետում առաքել հասցեատիրոջը: Ծանուցումն առաքվել է Ընկերություն վարչական վարույթի՝ ընդհուպ վարչական ակտի կայացումից հետո՝ ինչը նշանակում է իրավունքների ոտնահարում: Այսինքն, ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ-ն չի պահպանել օրենքով սահմանված պարտավորությունը՝ ինչի արդյունքում մենք գրկված ենք եղել պաշտպանելու մեր շահերը:

Համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի, Վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

3. Երրորդ հիմքով թե վարչական ակտի հիմք հանդիսացող արձանագրությունում և թե վարչական ակտում նշում է կատարվել ապրանքի քանակի, տեսակի և դրանց վաճառքի գների մասին: Հարկ ենք համարում նշել, որ ապրանքի քանակի և դրանց տեսակի մասին ընկերության աշխատակիցը որևէ տեղեկություն չի հայտնեյ և թե ինչպես են ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ-ի աշխատակիցները դրանց մասին իմացել իհարկե միայն վերջիններիս անօրինական գործողությունների հետևանքով: Իսկ ինչ վերաբերում է ապրանքի վաճառքի գնին, ապա հարկ է նշել, որ երկկողմանի որևէ հիմնավորում գոյություն չունի: Ավելին, Ընկերությունը դեպքի ամսվա ընթացքում վաճառել է բանան, որի միջին գինը կազմում է 500-ից 550 դրամ արժողությամբ, իսկ նարինջը՝ 600 դրամ արժողությամբ: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ դեպքի օրը վերը նշված տրանսպորտային միջոցում առկա է եղել 15 արկղ բանան և 10 արկղ նարինջ: Ուստի տվյալ տեսակի և քանակի ապրանքի վաճառքի գինն ընդհանուր կազմում է 239.685 դրամ:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել թիվ 1422174 վարչական ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով 08.05.2013 թ-ի թիվ 1422174 արձանագրությունը կազմած պաշտոնատար անձանց ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2012 թվականի հունվարի 30-ի թիվ 22-Ա հրամանով հաստատվել է <Հարկային մարմնի օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում օրենքով նախատեսված պատասխանատվության կիրառման և հարկային պարտավորությունների առաջադրման ընթացակարգը> (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի 10-րդ կետի համաձայն. <ՕՀՄ արդյունքում օրենքի հավելված 4-ի խախտումներ հայտնաբերվելու և հիմնավորվելու դեպքում ՕՀՎ աշխատակցի

(աշխատակիցների) կողմից կազմվում է սույն հրամանի թիվ 5 հավելվածով հաստատված ձևով արձանագրություն (երեք օրինակից)»:

Ընթացակարգի 11-րդ կետի համաձայն. <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան հարուցված վարչական վարույթ իրականացնող պաշտոնատար անձը՝ ՕՀՎ պետը, ՕՀՎ պետի հանձնարարությամբ պետի տեղակալը կամ ՕՀՎ բաժնի պետը (այսուհետ՝ պաշտոնատար անձ) վարչական վարույթի հարուցմանը (սույն ընթացակարգով նախատեսված արձանագրության կազմմանը) հաջորդող երեք օրվա ընթացքում սույն հրամանի թիվ 6 հավելվածով հաստատված օրինակելի ձևով պատշաճ ծանուցում է (կցելով արձանագրությունը) վարչական ակտի հասցեատիրոջը և իրավախախտման փաստի արձանագրմանն առնչվող անձանց (փոխադրող, վարորդ, առաքիչ և այլ) լուսմների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին»:

Ընթացակարգի 13-րդ կետի համաձայն. <Վարույթի ընթացքում՝

1) վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին լուսմների միջոցով հնարավորություն է տրվում արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ,

2) վարույթի մասնակիցներին օրենքով սահմանված կարգով հնարավորություն է տրվում հարկային մարմնում ծանոթանալու վարույթի նյութերին,

3) վարույթում որպես ապացույց գնահատվում են գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք պիտանի և անհրաժեշտ է համարվում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար,

4) հնարավորություն է տրվում ծանոթանալ պատասխանատվության և հարկային պարտավորությունների հաշվարկներին ու առաջադրման եղանակներին»:

Վերոգրյալից հետևում է, որ ՕՀՄ արդյունքում <<արկերի մասին> ՀՀ օրենքի հավելված 4-ի խախտումներ հայտնաբերվելու և հիմնավորվելու դեպքում նախ կազմվում է արձանագրություն: Դրանից հետո, արձանագրության կազմմանը հաջորդող երեք օրվա ընթացքում, վարչական ակտի հասցեատիրոջը և իրավախախտման փաստի արձանագրմանն առնչվող անձանց պատշաճ ծանուցվում է լուսմների անցկացման տեղի, օրվա, ժամի մասին, և միայն լուսմների անցկացումից հետո է ընդունվում վարչական ակտը:

Քննարկվող դեպքում թե արձանագրությունը, թե վարչական ակտը կազմվել են նույն օրը՝ 08.05.2013 թ-ին, իսկ համապատասխան լուսմները, որոնք պետք է նախորդեին վարչական ակտի կազմմանը, չեն իրականացվել: Այսինքն, վարչական ակտը կազմվել է Ընթացակարգի և <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների խախտմամբ:

Համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի <ա> կետի, անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<արկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ՎԱ ՊԵՎ ՕՀՎ 08.05.2013 թ-ի թիվ 1422174 վարչական ակտը:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ